15419

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«15» 12 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0192-22

Ձեռնարկողը՝ **«ՄԵԼ ՄԵՏԱԼ» ՍՊԸ**
ք. Երևան, փ. Լենինգրադյան, շ /48/3, բն. 27

Գործունեությունը՝ **Արտաշատ համայնքի արտադրական գոտում բանեցված կապարաթթվային մարտկոցների վերամշակման գործարանի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ №0192-22

<15> 12 2022թ.

Արտաշատ համայնքի արտադրական գոտում բանեցված կապարաթթվային մարտկոցների վերամշակման գործարանի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	**«ՄԵԼ ՄԵՏԱԼ» ՍՊԸ**
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, ք. Արտաշատ

Ներածական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 3-րդ կետի ա) ենթակետի, բանեցված կապարաթթվային մարտկոցների վերամշակման գործարանի վերազինումը դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեությունը վերաբերում է վտանգավոր թափոնների գործածությանը և ծավալվելու է Արտաշատ քաղաքի արտադրական գոտում, Արտադրական հանգույց, 8 հասցեում՝ գործող մետաղների վերամշակման գորածարանի տարածքում: Նշված գործունեությունն իրականացնող ձեռնարկող է հանդիսանում «ՄԵԼ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/, որին իրավունքներ է փոխանցվել «ԱՍ ՄԵՏԱԼ» ՍՊԸ-ից: Պայմանավորված նոր գործարար հանգամանքներով Ընկերությունը հրաժարվել է պղնձի և ալյումինի թափոնների ձուլումից և համապատասխանաբար այդ նպատակի համար վառարաններ տեղադրելուց, արդյունքում՝ արտադարական ծավալների և տեխնոլոգիական գործընթացների նվազեցմամբ պայմանավորված, գործունեության ազդեցությունը բնապահպանական տեսանյունից կդիտարկվի ավելի նվազ ազդեցությամբ:

Նկարագրական մաս. Գործարանի հարևանությամբ տեղակայված կառուցվածքները արտադրական հանգույցի ֆունկցիոնալ ենթակառույցներն ու մասնաշենքերն են: Տարածքի հարևանությամբ առկա են գործող արտադրական հանգույցներ /ավելի քան 340 մ հեռավորությամն վրա/ սպասարկման օբյեկտներ և պահեստային տարածքներ: Հարևանությամբ բացակայում են բնակելի տարածքները: Գործարանը ամենամոտ բնակելի տնից գտնվում է 302 մ հեռավորության վրա, իսկ Երևան-Երասխ Մ-2 միջպետական ճանապարհից 310 մ հեռավորության վրա: Գեոմորֆոլոգիական տեսակետից բնութագրվող տարածքը հարթ է, բացարձակ նիշերի տարբերությունը ծովի մակերևույթից կազմում է մոտ 850- 900մ:

Գործունեության իրականացման համար դիտարկվել են այլընտրանքային տարբերակներ: Ընտրված տարբերակը հիմնավորվել է վատագույն պայմանների համար՝ երբ բոլոր մարտկոցներում առկա է ծծմբական թթու, ինչով պայմանավորված թթվային լուծույթի ընդունման համար նախատեսվել են առավելագույն տարողությամբ թթվակայուն կոնտեյներ /բաքեր/:

Ներկայումս տարածքում գտնվում է հիմնական արտադրական մասնաշենքը և մի քանի օժանդակ շինություններ /մեքենաների կայանատեղի, պահեստային շինություն և այլն/: Հիմնական մասնաշենքում տեղադրված և ժամանակին շահագործվում էին մի քանի գազային և էլեկտրական վառարաններ, խողովակաշար: Շենքից դուրս գտնվում են՝ ցիկլոնը, արտազատվող գազերի զտման համակարգը, օդափոխության համակարգը և բանեցված մարտկոցների մասնատման սեղանը:

Տարածքն ապահովված է ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման և էլեկտրա-մատակարարման ենթակառուցվածքներով:

Ընկերությունը գործունեությունը կազմակերպելու համար նախատեսում է հավաքել միայն կապարաթթվային մարտկոցներ, որոնք հիմնականում օգտագործվում են ավտոմեքենաներում: Մարտկոցները մեծամասամբ կազմված են վեց գալվանական բջիջներից, որոնցից յուրաքանչյուրի լարումը 2 Վոլտ է: Ամեն բջջի կատոդը պատրաստված է կապարի երկօքսիդից (PbO_2), իսկ անոդը՝ կապարից: Երկու էլեկտրոդները գտնվում են ծծմբական թթվի լուծույթի մեջ: Գործնականում գրեթե անհնար է խուսափել այնպիսի մարտկոցային թափոնների ընդունումից, որոնցում կա թթվային լուծույթ, ինչից ելնելով տեղամասը նախատեսվում է կահավորել նաև նոսր էլեկտրոլիտի չեզոքացման հանգույցով, որը բաղկացած կլինի թթվակայուն երկու բաքերից, կրի պահեստից և լուծույթի թթվայնությունը չափող սարքերից: Գործարանում ընդունվող մարտկոցների քանակը կտատանվի 2100 – 2200 հատ մարտկոց տ/տարի: Կապարթթվային մարտկոցների թափոնների և այլ հումքից ակնկալվող կապարի վերամշակման պլանային արտադրողականությունը գործարանում նախատեսված է՝ 1980 տ/տարի:

Բանեցված մարտկոցները ընդունվում, այնուհետև տեղափոխվում են ծածկի տակ գտնվող պահեստային հատված: Ընդունող բանվորը տեսակավորում է մարտկոցները՝ տեղափոխելով դատարկ մարտկոցները մասնատող սեղանի վրա, իսկ մյուս մարտկոցները տեղափոխվում են ելեկտրոլիտի վնասազերծման տեղամաս: Մարտկոցների մասնատման /կտրատման/ սեղանի վրա մարտկոցի մարմինը սղոցվում է: Պլաստիկ մասերը տեղափոխվում են աղաց, իսկ կապար պարունակող ցանցերը և նստվածքը բեռնվում են սայլակների մեջ և տեղափոխվում հալման վառարաններ: Առանձնացված պլաստիկ մասերը մանրացվում են աղացի միջոցով, հավաքվում պարկերում և վաճառվում են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ հետագա վերամշակման կամ վաճառքի համար:

Էլեկտրոլիտների վնասազերծման տեղամասում, որը գտնվում է արտադրական մասնաշենքի ներսում, նախատեսված է տեղադրել թթվակայուն նյութերից պատրաստված երկու հատ՝ 1մ^3 ծավալով բաքեր, կրի պահեստ և հանգած կրի պատրաստման տարողություն: Էլեկտրոլիտ պարունակող մարտկոցների պարունակությունը լցվում է թթվակայուն բաքերից մեկի մեջ՝ մինչև ծավալի 0.8 մասի մակարդակը /800 լ/, որից հետո լցվում է երկրորդ բաքը: Լցվելուց հետո առաջին բաքի լուծույթում pH-մետրի օգնությամբ չափվում է թթվայնությունը և ըստ ստացված արդյունքների պատրաստվում է համապատասխան քանակությամբ հանգած կիր (կրակաթ), ինչը լցվելով բաքի մեջ չեզոքացնում է բաքում պարունակվող ծծմբական թթուն: Չեզոքացված լուծույթը մեկ անգամ ևս ստուգվում է pH-մետրով և 6.5 – 8.5 ցուցանիշին համապատասխանելու դեպքում հեռացվում է կոյուղի:

Կապարի թափոնների հալման տեղամասը գտնվում է արտադրական մասնաշենքի եզրամասում: Մասնաշենքում տեղադրվում են երկու հատ հորիզոնական պտտվող գազային վառարան: Աշխատելու է միայն մեկ վառարան, երկրորդը կմնացվի միայն առաջինի վերանորոգման կամ նախապատրաստման ժամանակ: Կապարի

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
02543169
ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

թափոնները սայլակներով տեղափոխվում է վառարանների բեռնման հարթակ, առաջնահերթ միացվում է գազային այրիչը, գազամաքրման համակարգի օդամղիչը, այնուհետև բեռնվում է կապարի թափոնը: Հալվածքը հոսում է մետաղական տարողությունների մեջ, որոնք սայլակների և տելֆերի միջոցով տեղափոխվում են ձուլման տեղամաս և բեռնվում ռաֆինացման վառարանների մեջ, որոնք նույնպես աշխատում են գազային վառելիքով: Կապար պարունակող թափոնների 2000 տ/տարի առավելագույն քանակի դեպքում վառելքի (բնական գազ) ծախսը կկազմի՝ 98600 մ^3:

Ռաֆինացման վառարանում տրվում է օդ /կոմպրեսորի միջոցով/ և կաուստիկ սոդա: Այս հանգույցում իրականացվում է կապարի հալվածքի մաքրում և ձուլակտորների ստացում: Ձուլման վառարանից հեղուկ կապարը հոսում է կաղապարման հոսքագծի թուջե կաղապարների մեջ, որոնցում հովանալուց հետո ձուլակտորները տեղափոխվում են նույն տարածքի պահեստային մաս, որտեղից և առաքվում են պատվիրատուներին:

Կապարի հալման և ռաֆինացման վառարանները միացված են գազամաքրման համակարգին, որը բաղկացած է 3 հատ նստեցման խցերից /որոնցում նաև կատարվում է հովացում՝ բնական եղանակով/, 3 հատ կենտրոնախույս ցիկլոններից, խառնման խցից, թևքային զտիչների հանգույցից և օդամղիչից: Թևքային զտիչները բաղկացած են գործվածքային պարկերից, որում հավաքվում է որսված փոշին: Պարկերը ծառայում են մինչև մեխանիկական վնասում, որից հետո դրանք փոխարինվում են: Դրանք դասվում են կենցաղային աղբի շարքին և կենցաղային աղբի կազմում տեղափոխվում են կենցաղային աղբավայր:

Արտանետումները հեռացվում են օդամղիչի վրա տեղադրված 8.2 մ բարձրությամբ և 0.8 մ տրամագծով խողովակի միջոցով:

Գազամաքրման հանգույցի արդյունավետությունն ըստ փոշու որսման ցուցանիշների բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

- Նստեցման խուցի արդյունավետությունը՝ 20 – 30 %, ընդունվում է 20%,
- Ցիկլոններ՝ 50%,
- Թևքային զտիչներ՝ 90 - 95%, ընդունվում է 90%:

Արդյունքում կապարի ձուլման տեղամասի գազամաքրման համակարգի արդյունավետությունը կկազմի՝ 96%:

Նախատեսվող գործունեության հիմնական ռիսկերը կապված են՝ թափոնների մեխանիկական մանրացման և կտրտման գործընթացների, էլեկտրոլիտի լուծույթի չեզոքացման, ձուլման և ռաֆինացման տեխնոլոգիական գործընթացների և արտադրական գործընթացում առաջացող տարբեր տեսակի թափոնների հետ:

Մթնոլորտային օդի վրա հնարավոր ազդեցություն կարող է առաջանալ բանեցրած մարտկոցներից էլեկտրոլիտի /ծծմբական թթվի/ մնացորդների դատարկման, չեզոքացման արդյունքում և կապարի ջարդոնի ձուլման ընթացքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր մարտկոցներում ծծմբական թթվի միջին կոնցենտրացիան կազմում է 40%, իսկ բանեցրած մարտկոցներում այդ տոկոսը անհամեմատ ցածր է, թթվի առավելագույն քանակը մարտկոցներում կկազմի՝ 25.6 տ/տարի, իսկ ծծմբական թթվի առավելագույն արտանետումը կկազմի 0.1 %: Հետևաբար ծծմբական թթվի առավելագույն տարեկան արտանետումը կարող է կազմել՝ 25.6 տ/տարի x 0.001 = 0.026 տ/տարի, իսկ վարկյանում արտանետումները կկազմեն՝ 0.0035 գ/վրկ:

Գազի այրման և կապարի թափոնի հալման ընթացքում կառաջանան արտանետումներ, այդ թվում՝ պինդ մասնիկներ, ազոտի և ածխածնի օքսիդներ, որոնց ամփոփ քանակները բերված են ստորև.

№	Արտանետվող նյութը	Նյութերի առավ. միանվագ ՍԹԿ, մգ/մ³	Վտանգա-վորության դասը	Արտանետումները	
				գ/վրկ	տ/տարի
1	ԿՄ	0.5	3	0.0174	0.13
2	NO_2	0.2	3	0.03	0.12
3	CO	5	4	0.17	1.27
4	H_2SO_4	0.3	2	0.0035	0.026

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման հաշվարկներ «Էռա» համակարգչային ծրագրով և արդյունքները համեմատվել են բնակավայրերի համար սահմանված սանիտարական նորմերի հետ: Համաձայն հաշվարկների արդյունքների աղտոտվածության առավելագույն մակարդակները արտանետվող բոլոր նյութերի համար գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

№	Աղտոտող նյութեր	Բնակելի գոտիների առավելագույն միանվագ ՍԹԿ[1], մգ/մ³	Գետնամերձ կոնցենտրացիա	
			ՍԹԿ մասով	Մգ/մ³
1	Ազոտի երկօքսիդ	0.2	0.0889	0.0178
2	Ածխածնի օքսիդ	5	0.1631	0.8158
3	Ծծմբական թթու	0.3	0.0164	0.00492
4	Կախված մասնիկներ	0.5	0.61	0.305

Բանեցված մարտկոցների վերամշակման տեղամասում ջուրն օգտագործվելու է կրի լուծույթի պատրաստման և սպասարկող անձնակազմի տնտեսական և կենցաղային կարիքների համար: Ըստ նախնական հաշվարկների կրի լուծույթի պատրաստման համար կպահաջվի առավելագույնը 70 մ³ թարմ ջուր, կամ օրական՝ 0.27 մ³: Կապարի վառարանների հովացման համար նախատեսված է շրջանառու համակարգ, որի համար ջրի ծավալը կազմում է 84 մ³/տարի: Հովացման համակարգերում արտահոսք չի առաջանում: Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը ընդհանուր կկազմի 390.6 մ³/տարի կամ 1.5 մ³/օր: Արտադրամասից կոյուղի հեռացվող կեղտաջրերի ընդհանուր քանակը կկազմի՝ 552.9 մ³/տարի կամ 2.13 մ³/օր:

Գործունեության իրականացման արդյունքում 140 մ³/տարի, 0.54 մ³/օր ծավալով արտադրական արտահոսք կառաջանա էլեկտրոլիտի չեզոքացման հանգույցում և կուղեկցվի հետևյալ գործընթացով. $H_2SO_4 + Ca(OH)_2 \rightarrow CaSO_4\downarrow + 2H_2O$:

Քանի որ ջուրը ենթակրվում է չեզոքացման և պարզեցման /մեխանիկական մասնիկների, կապարի և վերջինիս միացությունների նստեցում/, ջրի որակը կոյուղու քաղաքային ցանցի /«Վեոլիա ջուր» ՓԲԸ/ որակի պահանջներին համապատասխանելու դեպքում կհեռացվի կոյուղի:

Բանեցված թթվային մարտկոցների ընդունման ընթացքում կառաջանան հետևյալ թափոնները.

- մարտկոցներում պարունակվող էլեկտրոլիտի թափոններ՝ 70 մ³ թափոնի առավելագույն հաշվարկային քանակով: Թափոնը չեզոքացվում է կրի լուծույթի օգնությամբ, իսկ առաջացած նստվածքը ուղարկվում է կապար պարունակող թափոնների ձուլման տեղամաս:

- հալման արդյունքում առաջացող խարամ, որի տարեկան առավելագույն քանակը կարող է կազմել՝ 100 տ/տարի: Թափոնը հավաքվում է արտադրական շինության առանձին հատվածում և պայմանագրի հիման վրա կտեղափոխվի Արտաշատի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

- թևքային զտիչներում որսված փոշի՝ 0.67 տ/տարի քանակությամբ: Այս թափոնը համապատասխանում է «Մաքրազտիչներից փոշի՝ գունավոր մետաղների պարունակությամբ», դասիչ՝ 31201700 01 01 3: Փոշին զտիչներից դատարկվում է պլաստիկ պարկերի մեջ և պայմանագրի հիման վրա տեղափոխվում Արտաշատի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Նախատեսվող գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա նվազեցնելու նպատակով ՇՄԱԳ-ում կարևորվել են հետևյալ միջոցառումները՝

- Գնված մարտկոցները տեղափոխել անմիջապես պահեստային տարածք,
- Բանեցրած մարտկոցները պահեստավորել հատուկ հատկացված պահեստային տարածքում, որը պետք է լինի փակ շինությունում, ունենա բետոնապատ հատակներ և կահավորված լինի օդափոխության համակարգերով
- Պահեստը պետք է ունենա հակահրդեհային ազդանշանային համակարգ
- Մարտկոցներում պարունակվող էլեկտրոլիտը դատարկել թթվակայուն տարողության մեջ և չեզոքացնել սահմանված գործընթացներով,
- Էլեկտրոլիտի չեզոքացման տեղամասը պետք է կահավորվի օդափոխության համակարգով,
- չեզոքացված լուծույթի թթվայնությունը կրկնակի ստուգել, անհրաժեշտության դեպքում կատարել լրացուցիչ չեզոքացում,
- Կապար պարունակող թափոնների հալման և ռաֆինացման վառարանները կահավորել բարձր արդյունավետությամբ թևքային զտիչների համակարգով,
- Պարբերաբար իրականացնել բանվորական միջավայրի, դեֆլեկտորների, թևքային զտիչների և թթվի չեզոքացման հանգույցի մշտադիտարկումներ, անհրաժեշտության դեպքում կարգաբերել սարքավորումները,
- Բանեցրած մարտկոցների, թթվի մնացորդների և կապար պարունակող թափոնների հետ աշխատելիս ապահովել հատուկ պաշտպանիչ միջոցներ՝ ձեռնոցներ, դիմակներ և արտահագուստ,
- Սպասարկող անձնակազմը պետք է անցնի նախնական և պարբերական հրահանգավորման:
- Վառարանները և կաթսաները պետք է համալրված լինեն ավտոմատ կառավարման համակարգերով և հակահրդեհային ավտոմատ ազդանշանային համակարգով:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված՝ հրդեհային անվտանգությանը և հնարավոր արտակարգ և վթարային իրավիճակների կանխարգելմանը: Գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպամական և սոցիալական ազդեցությունները մեղմացնելու, կամ կանխարգելելու միջոցառումներն ամփոփվել են ՇՄԱԳ հաշվետվության Բնապահպանական կառավարման պլանում և մոնիթորինգի ծրագրում: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսված տարեկան ծախսերը գնահատվել է 640.0 հազ. ՀՀ դրամ:

Արտադրական գործընթացների ժամանակ օդում ծծմբական թթվի աերոզոլների, վառարանների և կաթսաների արտանետումներում վնասակար նյութերի պարունակությունները վերահսկելու և արտադրամասի տարածքում վնասակար

նյութերի պարունակության որոշման համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ) կատարելով նմուշառում: Ելնելով Ընկերության թափոնների վերամշակման գործարանի տեխնոլոգիական առանձնահատկություններից՝ մշտադիտարկման ծրագրով նախատեսվում է գործիքային չափման եղանակով վերահսկել մթնոլորտային օդում փոշու, ազոտի երկօքսիդի, ածխածնի օքսիդի, ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները: Օդում ծծմբական թթվի աերոզոլների որոշումը կիրականացվի նմուշառման և քիմիական անալիզի միջոցով: Դիտակետերը /նմուշառման վայրերը կոորդինատներով/ նախատեսված են ինչպես գործարանի տարածքում, այնպես մերձակայքում: Մշտադիտարկումներն իրականացվելու են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների նկատմամբ /ջրեր, մթնոլորտային օդ, հող, կենսաբազմազանություն, սոցիալական միջավայր, ինչպես նաև կապարի և կապարի միացությունների մնացորդային քանակների որոշման համար՝ հալման արդյունքում առաջացող խարամում/:

Պատճառաբանական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Արտաշատ քաղաքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ փորձաքննական գործընթացում շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, ինչպես նաև առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարություններից և Արարատի մարզպետարանի կողմից ստացված կարծիքները, առաջարկությունները և դիտողությունները ևս հաշվի են առնվել ՇՄԱԳ-ի լրամշակումներում:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ հարկ է նշել, որ Ընկերության կողմից նախատեսվող գործունեությունը կարևոր է բանեցված կապարաթթվային մարտկոցների /որպես վտանգավոր թափոններ/ ճիշտ կառավարման և շրջակա միջավայրի խնդիրների լուծման տեսանկյունից: Գործունեությունն ունի իր կարևորությունն ինչպես բնապահպանական, այնպես էլ սանիտարական/առողջապահական տեսանկյունից, քանի որ անկանոն ձևով կուտակված բանեցված կապարաթթվային մարտկոցներ թափոնները հանդիսանալով շրջակա տարածքների աղտոտման աղբյուր՝ վերամշակումից հետո կօգտագործվեն որպես երկրորդային հումք:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված միջոցառումների, մասնավորապես՝ մշտադիտարկումների իրականացման արդյունքում, վերահսկելի և կառավարելի կլինեն օդային ավազանն աղտոտող վնասակար նյութերի քանակները և աղտոտվածությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Գործարանի շահագործման ընթացքում անհրաժեշտ է պահպանել տեխնոլոգիական բոլոր գործընթացներն, աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար կարևորել կապարի ձուլման տեղամասում գազամաքրման համակարգի /թևքային զտիչներում և ցիկլոններում/ մաքրման արդյունավետությունը՝ անհրաժեշտության դեպքում իրականացնել սարքավորումների կարգաբերում:
2. Կապարի ձուլման և թթվի չեզոքացման արտադրական հանգույցներում անհրաժեշտ է ապահովել մոնիթորինգի ծրագրում նախատեսված մշտադիտարկումների իրականացումը և դրանց կատարման ժամկետները՝

վերահսկելու նպատակով մթնոլորտային օդում՝ փոշու, ազոտի երկօքսիդի, ածխածնի օքսիդի, ծծմբի երկօքսիդի և ծծմբական թթվի կոնցենտրացիաները:

3. Արտադրական գործընթացում անհրաժեշտ է կարևորել աշխատաողների անվտանգության միջոցառումների ապահովումը, կապված՝ սպասարկող անձնակազմի ծծմբական թթվի և կապարի հետ շփմամբ:
4. Արտադրական տարածքում անհրաժեշտ է ապահովել հակահրդեհային անվտանգության բոլոր միջոցառումները, ներառյալ՝ հրշեջ հիդրանտի տեղադրում:
5. Հսկիչ չափումների ձևով իրականացնել անալիզներ՝ հալման արդյունքում առաջացող խարամի բաղադրությունը որոշելու համար /կապարի և կապարի միացությունների մնացորդային քանակներ/, քանի որ այն նախատեսված է հեռացնել քաղաքային աղբավայր:
6. Գործարանի շահագործման փուլում վերահսկել կաթսայատան աշխատանքը արտանետումների քանակները թույլատրելի նորմերի սահմաններում պահելու նպատակով:
7. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ վտանգավոր թափոնների գործածության լիցենզիա:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄԵԼ ՄԵՏԱԼ» ՍՊԸ կողմից ներկայացված Արտաշատ համայնքի արտադրական գոտում նախատեսվող բանեցված կապարաթթվային մարտկոցների վերամշակման գործարանի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Հ. Մկրտչյան

Ընդամենը՝ 7 էջ